

### ՅԱՌԱԶԱԲԱՆ

Լեհաստանի հայերէն ձեռագիրներն ուսումնասիրելու նպատակով 1932 Յունիսին կը գտնուէի Լվով : Երբ աչքէ կ'անցնէի Հին Համալսարանի Մատենադարանի ձեռագիրները, ուշադրութիւնս գրաւեց Թ. 58 հայերէն ձեռագիրը : Frédéric Macler<sup>1</sup>, որ 1925ին համառօտիւ ցուցակագրած էր Համալսարանիս հայերէն ձեռագիրները, Թ. 58ի բովանդակութիւնը նշանակած էր պարզապէս. «*texte qui semble être un récit de voyage (?)*», այսպէս հարցականով :

Հարեւանցի ակնարկ մը ձեռագրիս բովանդակութեան վրայ երեսն քերաւ, որ Ուղերութեան մը նկարագրութիւնն է այն, զրի առնուած նոյն իսկ ուղերօրին, Սիմէոն դպիր Զամոսցացոյ գրչով, ԺԷ դարու առաջին քառորդին : Հետաքրքրեց զիս Ուղեգրութիւնս :

Որովհետեւ կարն էր ժամանակս արտագրելու համար ամբողջ ձեռագիրը, խնդրեցի Համալսարանի վարչութեանէն, որ հանի եր-

---

<sup>1</sup> Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine (juillet-août 1925). *Revue des Études arméniennes*, t. VII (1927), p. 126—127.